## ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՎԱՍՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Սույն թվականի նոյեմբերի 26—29 օրերին Վլադիմիրի մարզի պատմական Սուզդալ քաղաքում Ռուս Պրավոսլավ Եկեղեցու նախաձեռնությամբ տեղի ունեցավ Եվրոպայի երիտասարդների էկումենիկ խորհրդի (ԵԵԷԽ) հերթական ժողովը: Ժողովին մասնակցեցին սոցիալիստական տարբեր երկրների երիտասարդական կազմակերպությունների հոգևորական և աշխարհական շուրջ քառասուն ներկայացուցիչներ:

Ժողովի բնաբանն էր՝ «Մասնակցություն վասն խաղաղության զարգացման—Եվրոպայի սոցիալիստական երկրների երիտասարդների ներդրումը երիտասարդաց միջազգային տարում»:

Լիագումար չորս նիստերում լսվեցին «Զարգացում հանուն խաղաղության» թեմայով երկու գլխավոր զեկուցումներ՝ աստվածաբանական և ոչ աստվածաբանական մոտեցմամբ:

Այնուհետև աշխատանքային երեք խմբերում քննարկվեցին առաջադրված հետևյալ երեք ենթաթեմաները.

ա.—«Արևելաեվրոպական շրջանի երիտասարդների դերը Եվրոպայի երիտասարդների էկումենիկ խորհրդում».

բ.—«Քրիստոնեական ծառայությունը սոցիալիստական հասարակարգում».

գ.—«Խաղաղության և միության քրիստոնեական վկայություն»:

Ժողովի ավարտին՝ քննարկված հարցերի վերաբերյալ ընդունվեց պաշտոնական մի հաղորդագրություն:

Ժողովը քննության առարկա դարձրեց նաև Հելսինկիի վերջնական պայմանագրի տասնամյակի առթիվ 1985 թ. Ֆինլանդիայում տեղի ունենալիք ժողովի, ինչպես նաև նույն թվականին Մոսկվայում կայանալիք երիտասարդների և ուսանողների փառատոնին ԵԵԷԽ-ի մասնակցության վերաբերյալ մի շարք կարևոր հարցեր:

Ռուս պրավոսլավ Եկեղեցու նախաձեռնությամբ գումարված սույն խորհրդակցությանը մասնակցում էին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը և Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը:

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆ